


**1.2.6. Առևտուր, այլ ծառայություններ
(սպառողական շուկա)**

2010թ. հունվար-սեպտեմբերին ԼՂՀ սպառողական շուկան (ըստ տնտեսավարող սուբյեկտներից ստացված հաշվետվությունների և չհաշվառվող դաշտի լրահաշվարկի) կազմել է 65509.6 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ, համադրելի գներով, աճելով 7.6 տոկոսով:

	2009թ. հունվար-սեպտեմբերի փաստացի ծավալը, մլն դր	2010թ. հունվար-սեպտեմբերի փաստացի ծավալը, մլն դրամ	2010թ. հունվար-սեպտեմբերը 2009թ. հունվար-սեպտեմբերի համադրելի գներով, տոկոսներով	Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ	
				2009թ. հունվար-սեպտեմբերին	2010թ. հունվար-սեպտեմբերին
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը այդ թվում՝	56113.1	65509.6	107.6	100.0	100.0
մանրածախ առևտրի շրջանառությունը	46330.5	53456.4	107.3	82.6	81.6
բնակչությանը մատուցված ծառայությունները	9782.6	12053.2	111.2	17.4	18.4

Սպառողական շուկայում մանրածախ առևտրի շրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների կառուցվածքն 2009- 2010թթ. հունվար-սեպտեմբերին (տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ)




Մանրածախ առևտուր

2010թ. հունվար-սեպտեմբերին մանրածախ առևտրի շրջանառությունը, ընթացիկ գներով, կազմել է 53456.4 մլն դրամ, որը 2009 թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 7.3 տոկոսով:

Մանրածախ առևտրի շրջանառությունը 2010թ. հունվար-սեպտեմբերին

	2010թ. հունվար-սեպտեմբերին		Ընդամենի նկատմամբ, %
	Շրջանառությունը, ընդամենը, մլն դրամ	2009թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ, համադրելի գներով, %	
Մանրածախ առևտուր, ընդամենը այդ թվում՝	53456.4	107.3	100.0
խանութների	39023.2	107.9	73.0
սպառողական ապրանքների շուկաների	3795.4	103.0	7.1
գյուղատնտեսական ապրանքների շուկաների	2245.2	107.3	4.2
առևտրի այլ օբյեկտների	8392.6	106.7	15.7

Մանրաձախ առևտրի շրջանառությունը ըստ ձևավորման տարյուրների,
2010թ. հունվար-սեպտեմբերին




Մանրաձախ առևտրի շրջանառությունն ըստ ԼՂՀ շրջանների,
2009-2010թթ. հունվար-սեպտեմբերին

	2009թ. հունվար-սեպտեմբերին		2010թ. հունվար-սեպտեմբերին		2009թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ, համադրելի գներով, %
	Մանրաձախ առևտրի շրջանառությունը, մլն դրամ	Ընդամենի նկատմամբ, %	Մանրաձախ առևտրի շրջանառությունը, մլն դրամ	Ընդամենի նկատմամբ, %	
Ընդամենը	46330,5	100,0	53456.4	100.0	107.3
ք. Ստեփանակերտ	31594.0	68,2	39012.1	73.0	114.9
Ասկերան	3127.8	6,7	2899.1	5.4	86.2
Հաղրուք	2605.3	5,6	2609.9	4.9	93.2
Մարտակերտ	2795.6	6,0	2777.0	5.2	92.4
Մարտունի	4198.6	9,1	4385.0	8.2	97.2
Շահումյան	351.2	0,8	280.0	0.5	74.2
Շուշի	649.1	1,4	718.3	1.3	102.9
Քաշաթաղ	1008.9	2,2	775.0	1.5	71.5

ԼՂՀ շրջաններին բնորոշ են առևտրի շրջանառության տարբեր մակարդակներ: Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ մյուս շրջանների առևտրի շրջանառության մակարդակների տարբերությունը, հիմնականում, պայմանավորված է առևտրի օբյեկտների քանակով, բնակչության թվաքանակով, ինչպես նաև բնակչության գնողունակ պահանջարկի մակարդակի տարբերություններով և արտաքին շուկաներին կապող կոմունիկացիաների տեղաբաշխմամբ:

Առևտրի շրջանառության կառուցվածքն ըստ շրջանների, 2010թ. հունվար-սեպտեմբերին



2010թ. հունվար-սեպտեմբերին մեկ բնակչի հաշվով առևտրի շրջանառությունը կազմել է 374252.8 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, համադրելի գներով, աճելով 6.2 տոկոսով:

Մանրաձախ առևտրի շրջանառության համեմատական ակտիվությունը

	2009թ. հունվար-սեպտեմբերին	2010թ. հունվար-սեպտեմբերին	2010թ. հունվար-սեպտեմբերը 2009թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ (համադրելի գներով, %)
Ընդամենը, մլն դրամ	46330.5	53456.4	107.3
Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառության ծավալը, դրամ	327720,5	374252.8	106.2

Բնակչությանը մատուցված ծառայություններ

2010թ. հունվար-սեպտեմբերին հանրապետությունում բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալը փաստացի գներով կազմել է 12053.2 մլն դրամ, որը 2009թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 11.2 տոկոսով:

2010թ. հունվար-սեպտեմբերին 2009թ. հունվար-սեպտեմբերի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 10.8% հավելում, որը հիմնականում պայմանավորված է կրթության (28.7%), առողջապահության (8.0%), կոմունալ (7.5%), հանրային սննդի (6.2%) և մարդատար տրանսպորտի (2.4%) ծառայությունների սակագների հավելումով:


Բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալն ըստ տեսակների

Ընդամենը <i>այդ թվում՝</i>	Փաստացի ծավալը, մլն. դրամ		2010թ. հունվար- սեպտեմբերը տոկոսով 2009թ. հունվար- սեպտեմբերի նկատմամբ (համադրելի գներով)
	2009թ. հունվար – սեպտեմբերին#	2010թ. հունվար - սեպտեմբերին	
Ընդամենը	9782.6	12053.2	111.2
հյուրանոցներ և ռեստորաններ	679.3	909.0	131.1
տրանսպորտ	1231.9	1353.7	107.3
կապ	3206.3	3686.3	116.8
կոմունալ	2569.8	2921.9	105.8
սոցիալական	83.5	140.5	165.8
անհատական	199.0	220.5	105.6
կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում	64.3	78.4	120.8
ֆինանսական գործունեություն	537.1	797.2	144.2
անշարժ գույքի հետ կապված գործունեություն	101.9	188.9	185.4
տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառ	17.1	14.4	84.2
կրթություն	755.8	892.4	91.7
առողջապահություն	149.1	223.8	139.0
այլ տեսակի ծառայություններ	187.5	626.2	334.0

Բերված տվյալներից երևում է, որ 2010թ. հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ աճել են բնակչությանը մատուցված բոլոր տեսակի վճարովի ծառայությունների ծավալները, բացի տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության բնագավառներում մատուցված ծառայությունների ծավալներից:


2010թ. հունվար-սեպտեմբերին բնակչությանը մատուցված վճարովի ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել կապի (3686.3 մլն դրամ), կոմունալ (2921.9 մլն դրամ) և մարդատար տրանսպորտի (1353.7 մլն դրամ) ծառայությունները, համապատասխանաբար՝ 30.6, 24.2 և 11.2 տոկոս:

Բնակչությանը մատուցված վճարովի ծառայությունների կառուցվածքն ըստ տեսակների, 2010թ. հունվար-սեպտեմբերին




- 1. հյուրանոցներ և ռեստորաններ
- 2. տրանսպորտ
- 3. կապ
- 4. կոմունալ
- 5. սոցիալական
- 6. անհատական
- 7. կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում
- 8. ֆինանսական գործունեություն
- 9. անշարժ գույքի հետ կապված գործունեություն
- 10. տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառ
- 11. կրթություն
- 12. առողջապահություն
- 13. այլ

Բնակչությանը մատուցված ծառայությունների տեսակների բաշխվածությունն ըստ Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ մյուս շրջանների, 2010թ. հունվար-սեպտեմբերին




2010թ. հունվար-սեպտեմբերին բնակչությանը մատուցված բոլոր տեսակի ծառայությունների ոլորտում առկա է ք.Ստեփանակերտի գերակայությունը, բացի անշարժ գույքի հետ կապված ծառայություններից: Ըստ ծառայությունների տեսակների շրջանների տեսակարար կշիռը տատանվել է 2,6 -71,9 տոկոսի սահմաններում:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալներն ըստ Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ մյուս շրջանների



2010թ. հունվար-սեպտեմբերին հանրապետությունում բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալի 72.7 տոկոսը բաժին է ընկել Ստեփանակերտին, 27.3 տոկոսը՝ մյուս շրջաններին:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի կառուցվածքն ըստ ԼՂՀ շրջանների, 2010թ. հունվար-սեպտեմբերին



Մանրաձախ առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալի համեմատական ակտիվությունն ըստ շրջանների, 2010թ. հունվար-սեպտեմբերին

	Առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալը, մլն դրամ	Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալը, դրամ	Մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալը հանրապետության միջինի նկատմամբ, տոկոսով
Ընդամենը	65509.6	458638.3	100.0
Ստեփանակերտ	47778.5	906097.1	197.6
Ասկերան	3657.4	205068.7	44.7
Հադրութ	3097.2	248771.1	54.2
Մարտակերտ	3338.6	168607.6	36.8
Մարտունի	5276.5	223988.6	48.8
Շահումյան	326.2	104217.3	22.7
Շուշի	1065.1	205776.7	44.9
Քաջարաղ	970.1	118943.1	25.9